ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ **Համագործակցային ուսուցման կազմակերպումը գրականության ժամերին**

Կազմեց՝ Նարինե Բաբայան

Կապանի Ա. Մարգարյանի անվան N7 հիմն. Դպրոց

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

Կապանի N2 ավագ դպրոց ՊՈԱԿ

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն ……. էջ 2

2. Հետազոտական համատեքստ…….էջ 3

3.Գործնական համատեքստ…….էջ 4

4.Եզրակացություն…….էջ16

5.Գրականություն……էջ17

Ներածություն

Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն: Քննարկված են համագործակցային մի քանի մեթոդներ:

Հայաստանի դպրոցներն ու ուսուցիչները այսօր առնչվում են միանման խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումները:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցումը:

<<Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար>>[2,18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների

պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

•դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

•բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, 2

• ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են.

• դրական փոխկախվածություն,

• դեմ առ դեմ փոխազդեցություն,

• անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,

• միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,

• խմբային գործընթացի մշակում:

Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր:

<<Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ>>[1,17-24]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:

<<Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին>>[3,145]:

3

Համագործակցային ուսուցման կազմակերպումը

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լան շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

ՈՒսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ

<<Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝ երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում>>[4,48]:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: ՈՒսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարաքվորություն ընձեռնել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: ՈՒսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. **Աշակերտների թիմային առաջադիմությոան մեթոդ:** Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը,որ գնահատվում է աշակերտների առաջընթացը:Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները:
   Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և առանձին աշակերտների, և խմբերին:

2. **Խճանկար:** Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից:
   Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք

ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ <<Ջիգսո 2>>, որի փուլերն են՝

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3. **Շրջագայություն պատկերասրահում:** Սա <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխաքտանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

5

Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. **Երեք բանալի և մեկ կողպեք:** Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան:

Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

5. **Հինգրոպեանոց ազատ շարադրանք:** Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

6

<<Ես և նա>> նորավեպի վերլուծություն

Դասն ընթանում է բանավեճի ձևով: Դասի ընթացքում օգտագործվում են զուգահեռ վերլուծության եղանակներ (համեմատություն և հակադրություն՝ Ես, Նա (Անտոնիո), Ջուլետտա, <<Ես և նա>>), Լևոն (<<Արտիստը>>), Հայանթի և Նալ (<<Ջութակ և սրինգ>>) կերպարների միջև: Մեկնաբանվում և արդարացվում կամ դատապարտվում են հերոսների գործողությունները: Բացահայտվում է նովելի գաղափարը, հեղինակի միտումը: Այս ընթացքում կատարվում է նաև տեքստային աշխատանք (ամեն մի մեկնաբանություն, բնութագրում ուղեկցվում է կոնկրետ տեքստային մեջբերումով):

Դասաժամերի այսպիսի բաշխումը կողմնորոշիչ է և պայմանավորված է դասարանի աշակերտների պատրաստվածության, ընդհանուր զարգացման աստիճանով, ուսուցչի աշխատանքի հետապնդած նպատակով:

Դասագրքում <<Ես և Նա>> նովելն ամբողջությամբ տրված չէ: Նովելի մասին ամբողջական պատկերացում ստանալու և Ես-ի ու Նա-ի կերպարների համեմատական բնութագիրը կազմելու համար աշակերտները պարտադիր պետք է կարդան նաև նովելի առաջին մասը՝ <<Ես>>-ը: Այդ մասից առանձին հատվածներ, անհրաժեշտության դեպքում, կարելի է գրի առնել գրականության տետրերում և կարդալ դասարանում՝ նովելի ուսուցման ընթացքում: Այսպիսով, աշակերտները հնարավորություն են ստանում դուրս գալու դասագրքի շրջանակներից, ինքնուրույն մոտեցում են հանդես բերում համեմատելու նովելի երկու հատվածները, զուգահեռներ անցկացնելու նրանց մեջ: Նովելի կառուցվածքը հենց սկզբից հետաքրքրություն է առաջացնում աշակերտների մեջ: Մինչև <<Ես և Նա>>-ն նրանք չեն ուսումնասիրել այսպիսի կառուցվածք ունեցող գրական ստեղծագործություն: Ուսուցիչը կամ որևէ լավ ընթերցող աշակերտ կարդում է նովելի նախաբանը: Առաջին տպավորությունը, որը ստանում են աշակերտները պատմվող նյութի հավաստի, ճշմարտացի լինելն է: Հեղինակը հանդես է գալիս ներկայացնողի դերում, և նրա պատմությունը այդպես էլ կոչվում է՝ <<Մի կորած մարդու հիշատակարանից>>: Իսկ ինչու՞ << կորած մարդ>>, ինչ՞ << տրագեդիայի>> մասին է խոսքը,- սրանք պրոբլեմներ են, որ շարժում են աշակերտների միտքը, հետաքրքրություն առաջացնում պատմվող նյութի հետագա ընթացքի մասին:

Ես-ով՝ առաջին դեմքով պատմվող երկերը միշտ էլ ավելի անմիջական զգացումներ են արթնացնում աշակերտների մեջ: Համեմատության համար հիշեցվում է Շիրվանզադեի << Արտիստը>>, վիպակը, որը պատմվում է հեղինակի՝ որպես ականատեսի կողմից: Այստեղ հեղինակն ինքն է դարձել գեղարվեստական կերպար, և նկարագրվող դեպքերը զարգանում են նրա անմիջական մասնակցությամբ, գրողն իր վերաբերմունքն է արտահայտում այդ երևույթների, դեպքերի նկատմամբ, գնահատում է հերոսների արարքներն ու վարվեցողությունը:

Իսկ <<Ես և նա>> նովելում հեղինակն ինքը չի պատմում, այլ ներկայացնում է հերոսներից մեկի օրագիրը: Հետևաբար գեղարվեստական կերպար է դարձել նա, ով պատմում է, նկարագրում դեպքերը: Այդ կերպարը Ես-ն է: Բայց նովելում կա նաև մեկ ուրիշ պատմություն, որ ընթերցողին ներկաբացնում է Ես-ը: Ահա թե ինչ է ասում նա այդ մասին. <<. . . այս ուղղությամբ կատարած պրպտումներս դեռ երկար ժամանակ մտատանջում էին ինձ առանց որևէ եզրակացության հանգելու, մինչև որ, վերջապես, միանգամայն պատահական կերպով գտա բուն արմատը մի պատմվածքի ընթերցումից հետո, որը հանկարծ լուսավորեց իմ՝ մինչ այդ մութ ներքին աշխարհը:

7

Այդ պատմվածքն իտալական մի սիրավեպ էր <<Վրեժ>> վերնագրով: Այստեղ բառացի թարգմանությամբ առաջ եմ բերում այդ սիրավեպը, որի վերնագիրը, սակայն, դնում եմ <<Նա>>՝ պատմվածքի հերոսին ինձ հակադրելու համար:

Ուրեմն, սա մի երկրորդ պատմություն է: Այսպես, ինչպես հեղինակն է ներկայացնում <<Կորած մարդու >> օրագիրը, այնպես էլ <<Կորած մարդը>> ներկայացնում է <<Նա>> պատմվածքը, որի մեջ արդեն ինքը հանդես չի գալիս: Նրանում պատմությունը պատմվում է

հեղինակի կողմից, որն արդեն դեպքերի մասնակիցն ու ականատեսը չէ: Պարզապես՝ դեպքերի ընթացքը շարադրվում է հեղինակային խոսքի միջոցով, և դեպքերի զարգացմանը զուգընթաց՝ զարգանում են նաև հերոսների կերպարները, էջ առ էջ բացում են նրանց բնավորության նոր կողմերը: Հեղինակի մոտեցումը դեպքերի և դեմքերի նկատմամբ որոշակի երևում է նրա խոսքի միջոցով:

Պատմություն պատմության մեջ. այսպես կարելի է կոչել նովելի կառուցվածքը: Այս կառուցվածքով պատմելը ընթերցողի վրա թողնում է իրական եղելության տպավորություն:

Ինչպես և երևում է գլխավոր հերոսի խոստովանությունից, այդ պատմություններն և նրանց կրողները ներկայացված են հակադրության մեջ: Սա ևս հետաքրքրություն առաջացնող, միտք շարժող ստեղծագործական հնարանք է, որ տրամադրում է ընթերցողին, տվյալ դեպքում՝ աշակերտներին, շարունակել ընթերցումը, ճանաչել հերոսների միջև եղած հակադրությունը՝ որոնել այդ հակադրության ակունքը:

Ես-ի պատմությունը անկեղծ զրույց է, անկեղծ խոստովանություն՝ հոգեբանական իրարամերժ փոփոխություններով: Այդ զրույցի, վերհուշի մեջ զարգանում է հերոսի կերպարը՝ իր զգացմունքներով, հուշերով, ապրումներով, վերելքով և անկումներով: Աշակերտները տեքստից կարդում են այն հատվածները, որոնցում երևում է հերոսն իր հոգեկան աշխարհի տարբեր ելևէջներով: Տեքստային աշխատանքը կատարվում է այսպես. գրվում կամ կարդացվում է անհրաժեշտ հատվածը՝ աշակերտի սեփական մեկնաբանությամբ, վերաբերմունքով: Զուգահեռ հատվածների ընտրությունը և մեկնաբանությունը հուշում է նաև կոնֆլիկտի հիմքը, որտե՞ղ է այն թաքնված: Իսկ կանֆլիկտը նովելի առաջին մասում կրում է և՛ անձնական, և՛ հասարակական բնույթ: Անձնական բախումն արտահայտվում է սիրած աղջկանից խաբվելու հետևանքով՝ հերոսի հոգում ծնված իրարամերժ զգացմունքների հակադրության մեջ: Բայց այդ կոնֆլիկտը նաև հասարակական է, որովհետև նրանում այլ մոտիվ է հնչում: Անձնական ողբերգությունը հետևանք է մարդկանց նկատմամբ ունեցած անտարբերության, դրամի և հարստության հիման վրա ստեղծված փոխհարաբերությունների: Այդ փոխհարաբերությունների զոհն է նաև Ես-ը, և դրան նպաստել են այլ հանգամանքները, անձնական հատկանիշները, փոքրոգի և անկայուն խառնվածքը: Ներկայացնենք տեքստային աշխատանքի մի տարբերակ, որը օրինակ կարող է ծառայել հերոսի կերպարի: Աշակերտներից մեկը կարդում է առաջին հատվածը. <<Ամեն անգամ, որ նայում էի նրա զարմանալի պայծառ աչքերին, որոնց մեջ կարծես արևն էր վառվում, ամեն անգամ, որ լսում էի նրա կենսաթրթիռ ծիծաղը, որի մեջ կարծես գարնանային չարաճճի վտակ էր քչքչում. . . ինձ տիրում էր այնպիսի մի խենթ զգացում, որի ազդեցության տակ պատրաստ էի գործել և՛ ամենամեծ առաքինությունը, և՛ ամենամեծ ոճիրը- միայն թե նա հրամայեր>>:

Այս հատվածում երևում է սիրած աղջկա հմայիչ կերպարը, որ մարմնավորված է պատկերավոր խոսքի մեջ. <<զարմանալի պայծառ աչքեր>>, <<կենսաթրթիռ ծիծաղ>>:

Արտաքին պատկերավոր նկարագրի տակ թաքնված է նույնքան պատկերավոր, կենդանի ու զորեղ մի ուժ, որ ստիպում է դիմացինին ենթարկվել այդ ուժին, <<… որոնց մեջ կարծես գարնանային չարաճճի վտակ էր քչքչում…>>: Այս արտահայտությունները բացատրելուց հետո աշակերտներն անցնում են հերոսի կերպարի բնութագրմանը: Իսկ հերոսին այդ դրությամբ կարելի է բնութագրել որպես ամենաերջանիկը երջանիկների մեջ: Այս հատվածում ամեն ինչ պայծառ գույներով է ներկայացված, և թվում է, թե ոչ մի ստվեր չի կարող աղավաղել այդ պայծառությունը: Հաջորդ հատվածում կան կենսագրական թռուցիկ տեղեկություններ. հերոսը իրավաբանականի վերջին կուրսի ուսանող է՝ վառ երևակայությամբ օժտված և լի հասարակական գործունեության ու պայծառ ապագայի հեռանկարներով:

Աստիճանաբար նոր էջեր են բացվում, բացահայտվում են նոր իրավիճակներ, դրություններ, որոնց մեջ արդեն հերոսը ներկայանում է նոր կողմերով: Աշակերտներին հանձնարարվում է պայմանականորեն հերոսի կերպարիմ զարգացումն արտահայտող դրությունները և նրա հոգեբանական վերափոխությունները ներկայացնել այսպիսի գծագրի ձևով.

Ստեղծված դրությունը	**Հերոսի հոգեկան աշխարհը**
1. Սիրած աղջկանից ստանում է նամակ, կարդալիս հայտնի է դառնում , թե նա դառնալու է ուրիշի կինը:	Համակվում է անտարբերությամբ, ծում է, թե դա կատակ է, զվարչալի խաղ, որով ուզում է փորձել իր սերը:
2. Գրած նամակները մնում են անպատասխան:	Ապրում է զարմանք, ապազայրույթ, հուսահատություն:
3. Հեռագիր սիրած աղջկանից՝<< Ամուսնացա>>	Նախ զգում է անտարբերություն, անզգայություն, միաժամանակ էլ ավելի ուժգին սեր: Խոստովանում է. <<Այդպես է լինում միշտ. սիրույդ առարկան ա-

վելի սիրելի է թվում նրա կորցնելուց հե-

տո>>։

Հերոսի հոգեկան ամայությունը, նրա տվայտանքները արտահայտող տեքստային տարբերակն է հետևյալ գեղարվեստական պատկերը. <<. . . այնպիսի մի դատարկություն էի զգում շուրջս ու ներսս, որ կարծես ուղեղս հանել էին գանգիցս և ինձ նետել մի անապատ՝ թափառելու սոսկալի ամայության հետ, աննպատակ ու անղեկ, առանց իդեալների, առանց փրկության որևէ հույսի>>։ Հոգեկան այս տառապանքի մեջ աստիճանաբար հասունանում է վրեժի զգացումը։

9

Հաջորդ դրությունը, որ նոր զգացում է առաջացնում հերոսի հոգում, հետևյալն է. հանդիպումը չի կայանում, որովհետև սիրած աղջիկը հարուստ ամուսնու հետ մեկնել էր արտասահման։ Այստեղ պարզ է դառնում նաև մեկ այլ փաստ։ Նա ամուսնացել է հարուստ մարդու հետ (այդ փաստն անհրաժեշտ է նաև նովելի երկրորդ մասում Ջուլետտայի կերպարը բնութագրելու, ապա՝ Լուիզայի կերպարի հետ համադրելու և նրանց նմանությունները ցույց տալու համար)։

Անհագուրդ վրեժը ծնում է մի նոր զգացում՝ հուսալքում. <<Ու եղավ մի րոպե, որ քիչ մնաց ձեռք բարձրացնեի ինքս ինձ վրա՝ տառապանքների վերջ տալու համար>>։ Միայն այն միտքը, և այն հույսը թե վաղ կամ ուշ կհանդիպի սիրած էակին և կտա հասցրած անարգանքի հատուցումը, հետ է պահում նրան։

Աստիճանաբար նախապատրաստվում է անկումը. պետք էր մ,ի մթնոլորտ, մի միջավայր, որ նրան դուրս հաներ այդ հոգեկան ծանր վիճակից։ Եվ հերոսի համար ստեղծվում է մի նոր դրություն, որի պատկերը պարփակվում է այս նախադասության մեջ. <<Կյանքի ճահիճը կամաց-կամաց ծծում էր ինձ, և ես չէի նկատում այդ։ Ու երբ նկատեցի շատ ուշ էր. ես կորած մարդ էի արդեն>>։ Սկսվում է հերոսի կյանքի մի նոր շրջանը, և ընթերցողը նրան տեսնում է ուրիշ մարդ դարձած։ Աշակերտները համեմատության մեջ են ներկայացնում միևնույն մարդուն տարբեր կերպարները բնութագրող տեքստային հատվածները և մեկնաբանում նրա արարքները.

Ես	Կորած մարդ
1. Միշտ լավ հագնված, լայ-	. . . կեղտից պլպլացող
նամաշ վերար-	
նաթիկունք, 24-25 տարե-	կուով, մազակալած երեսով,
պրոֆեսիո-	

կան գեղեցիկ ուսանող. . . նալ հարբեցողի կարմիր քթով, կուրծքը

ներս ընկած սապատավոր մի մարդ,որի

բերանից էժանագին գինու, ծխախոտի

և սխտորի հոտ է փչում.

2. Ոգևորված այդ ապագայով և . . . այժմ դարձել էի դատարանների կողմա-

խրախուսված երջանիկ սիրով, նոցների կեղտոտ սեղանների վրա զա-

բուռն եռանդով, առանց հան- նազան մութ գործեր պաշտպանող,

գիստ առնելու, պատրաստում էի միշտ հարբած և միշտ քնատ մի աբլա-

ավարտական դիսերտացիա, որը կատ՝այդ զզվելի տիպի բոլոր բացասա-

ապագա մեծությունս ու փառքիս կան հատկանիշներով։

հաստատուն հիմնաքարը պիտի

հանդիսանար։

10

Առաջին հատվածում մասնակի գծերով ներկայացվում է հերոսի արտաքին նկարագրությունը՝ դիմանկարը տարբեր ժամանակներում։ Իսկ երկրորդ մասի հատվածներում երևում է նրա ներաշխարհը ժամանակային նույն տարբերության սահմաններում։ Ինչպես երևում է զուգահեռից, հերոսի արտաքին նկարագիրը և ներքին էությունը խիստ համապատասխանում են։ Այս զուգահեռը լրիվ բացահայտում է երբեմնի ուսանողի բարոյական անկումը։ Իսկ պատճա՞ռը. . . արդյոք կործանված սերը, սիրած աղջկա դավաճանությունը պե՞տք է նրան հասցնեին այդպիսի անկման։ Դասարանում կարելի է բանավեճ կազմակերպել։ «Ինչու՞ կործանվեց Ես-ը. . . »։ Դրա համար կարելի է օգտագործել հենց իր՝ հերոսի ինքնաբնութագրման, ինքնադատապարտման մտորումները։ «Ի՞նչն էր բուն պատճառը, որ ես այս աստիճան ընկել էի»։ Այս հարցի պատասխանն աշխատում է

փնտրել ինքը՝ հերոսը: Բայց հենց նա է գտնում, որ՝ «խո չէ՞ր կարելի այդ պատճառը դժբախտ սերը համարել,- մի բան, որը շատ-շատ կարող էր միայն ժամանակավորապես ընկճել, բայց ոչ առմիշտ կործանել մարդու: Դա անհեթեթություն կլիներ»: Հետևում է ինքնախոստովանությունը. «. . . անկարելի էր, որ ես այս աստիճան ընկնեի, եթե անկմանս սաղմերը չկրեինինքս իմ մեջ: Բայց որո՞նք էին այդ սաղմերը, որտեղի՞ց էին ընկել իմ մեջ, ի՞նչ էր նրանց արմատը. . . »: Ահա պրոբլեմ, որ առաջարկում է ինքը՝ հերոսը: Եվ նա առաջարկում է կարդալ հաջորդ պատմվածքը, որ վերնագրված է «Նա»՝ իրեն հակադրելու համար: Իսկապես Անտոնիոյի կերպարը օգնում է բացահայտելու իրավաբանականի ուսանողի անկման պատճառը: Միայն անձնական թերությունները չէին կարող անկման պատճառ լինել, այն ավելի խոր արմատներ ունի: Աշակերտների ուշադրությունն անհրաժեշտ է հրավիրել հետևյալ նկարագրության վրա. <<Ես, երևի, երբեք չէի կարող այդքան շքեղորեն հագցնել նրան և զարդարել նրա ականջները, կուրծքն ու մատները շողակներով ու մարգարիտներով, որքան էլ որ արդարանային փառավոր ապագայի վրա մի ժամանակ ունեցած հույսերս>>:

Այս նկարագրության մեջ երևում է տվյալ հասարակության փողապաշտական էությունը, որը և պատճառ է դառնում ուրիշների դժբախտության: Նույն ձևով համադրվում են Ջուլետտայի և Անտոնիոյի կերպարները, որոնց բնութագրման համար ուսուցիչը որոնողական, հետազոտական առաջադրանքներ է տալիս աշակերտներին: Տրվում է առաջադրանք. <<Ընտրեցե՛ք Ջուլետտային և Անտոնիոյին բնութագրող հատվածները, մեկնաբանեցե՛ք, թե ինչպիսին է հերոսը տվյալ հատվածում>>:

Ջուլետտա	Անտոնիո
Այնքան գեղեցիկ էր նա, որ թվում էր, թե հողեղեն չէր, այլ մի հավերժահարս, որ դուրս է եկել ծովի փրփուրներից: Աչքերը կապույտ էին ինչպես Իտալիայի ջինջ երկինքը, հայացքը զվարթ ու ան-հուն, ինչպես Ադրիատիկի հորիզոնները: Ոսկեգույն ծամերը սքանչելի գանգուր-մարմա-ներով պսակում էին նրա փոքրիկ սիրու-հպարտ	Նվագողը մի պատանի էր իտա-լական լաքյնեզր գլխարկով. . . Ի՛նչ հրաշալի աչքեր, բայց լուրջ ու խոհուն և թախծալի, ինչպես այն եղանակը, որ մի քիչ առաջ գում էր նա. ի՛նչ գրավիչ դեմք,բայց գունատ ու տխուր,ինչպես դի անդրի, ի՛նչ բարձր ու

նիկ գլուխը։ ճակատ,որի վրա փայլում էր ոչ երկ

բային վեհություն։

11

Եվ Ջուլետտան, և՛ Անտոնիոն գեղեցիկ են՝ օժտված արտաքին նուրբ բարեմասնություններով։ Անտոնիոյի արտաքին նկարագրի մեջ կան բառեր, որոնք բնութագրում են նաև նրա էությունը (լուրջ ու խոհուն, գունատ ու տխուր, բարձր ու հպարտ)։ Իսկ Ջուլետտայի նկարագրության մեջ աշակերտները մեջ են բերում հետևյալը. <<Միշտ զվարթ էր գարնան արևի պես, միշտ թռվռուն՝ թիթեռնիկի պես, միշտ չարաճճի՝ կայտառ երեխայի պես>>։ <<Զվարթ>>, <<թռվռուն>>, <<չարաճճի>> որոշիչները բնութագրում են նրա թեթև, անհոգի լինելը, որ հետևանք է հարուստ կյանքի,լավ ապրելակերպի։ Ի տարբերություն Ջուլետտայի՝ Անտոնիոն տխուր է ու թախծոտ. . . Ջուլետտայի և Անտոնիոյի սոցիալական տարբերությունը երևում է նրանց ունեցած առաջին իսկ զրույցի ընթացքում։

Ջուլետտա Անտոնիո

-Անտոնիո, ասա՛ ինձ, ո՞վ ես դու։ -Ես որբ եմ։

-Ո՞վ էր հայրդ։ -Մի բանվոր, որը մեքենայի

տակ ջարդվեց մեռավ։

-Մա՞յրդ։ -Մայրս գնաց հորս հետևից։

-Քույր չունե՞ս։ -Ոչ մի հարազատ։

Անտոնիոն տխուր է, թախծոտ, որովհետև որբ է, չունի ոչ մի հարազատ։ Նա աղքատ է ու թափառական։ Իսկ Ջուլետտա՞ն։ <<Մենք շատ հարուստ ենք>>,- ասում է նա և ասում է հպարտությամբ։ Մեկը հպարտ է իր հարստությամբ, իսկ մյուսը. . . << Ես շատ հպարտ եմ, սինյորինա>>։ Եվ այդ հպարտությունը երևում է նրա կեցվածքի, պահվածքի մեջ։ Այդ հպարտությունն է, որ անբաժան ուղեկցում է Անտոնիոյին հետագա բոլոր դրություններում։

1. Անտոնիոն խոստանում է նվագել հարուստ աղջկա տան պատուհանի տակ միայն գեղեցկության համար, բայց՝ երբեք դրամի։

2. Անտոնիոն չի բարձրանում Ջուլետտայի սենյակը՝ մինչև որ վերջինս հրավիրում է նիան։

3. <<Անտոնիո, մի՞թե այնքան հպարտ ես, որ չես համաձային ինձ հետ մի զբոսանք կատարել ծովի վրա>>։

4. Անտոնիոն հպարտ է նաև այն պահին, երբ պատուհանից ներքև նետված թղթի վրա կարդում է,<<Հայրս ասաց, որ իմ ու քո միջև անանց անդունդ կա։ Մենք վերևն ենք, դու ներքևը։ Էլ մի գա։ Մոռացի՛ր ինձ>>։

<<Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, հետո ցնցվեց ուժգնորեն, մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը, թուղթը, ցասումով լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց իրեն, խնամքով ծալեց, ծոցը դրեց, ոտով դեն շպրտեց գետնին ընկած դրամը և, ջութակը պինդ սեղմելով վիրավոր կրծքին, հեռացավ՝ անարգանքի կսկիծը հպարտ սրտի մեջ պարուրած>>: Ես-ը կարդալով սիրած աղջկա նամակը, համակվում է անտարբերությամբ, հուսահատությամբ, իսկ Անտոնիոն՝ հպարտ զայրույթով, զուսպ և ինքնատիրապետող հանգստությամբ՝ չմոռանալով ոտքով դեն հրել դրամը:

12

Աշակերտները տալիս են նրանց տարբերությունը. Անտոնիոն ծնվել և մեծացել է աշխատավորական միջավայրում, իսկ Ես-ը՝ քաղքենիական միջավայրի ծնունդ է, նա սովոր չէ հանդիպել արգելքների, առավել ևս՝ հաղթահարել դրանք: Այս երկու կերպարները համեմատվում են նաև Լևոնի հետ (<<Արտիստը>>): Իր հպարտությամբ Անտոնիոն հիշեցնում է Լևոնին: Նույն հպարտությամբ Լևոնը շնորհավորում է Լուիզայի մորը՝ աղջկա ամուսնության կապակցությամբ՝ հոգում զսպելով վիշտն ու կորսյալ ցավը: Նրանք նման են նաև գեղեցիկի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով. <<Երբ խոսք բաց արի թատրոնի և երաժշտության մասին, պատանին կերպարանափոխվեց, ինչպես կրակոտ սիրահար…>>, <<Նրա օդը, կերակուրը, կյանքը, ամեն ինչ թատրոնն էր>> և այլն,- հիշում են աշակերտները Շիրվանզադեի բնութագրումները:

Լևոնն ու Անտոնիոն նույն միջավայրի ծնունդ են, երկուսն էլ տաղանդավոր, բայց աղքատության պատճառով կյանքի հատակը նետված: Երկուսի համար էլ ապրելը պայքար է, բայց երկուսն էլ հպարտ են ու համառ, երբեք չեն ստորանում ու նվաստանում: Նրանց հատուկ է պայքարի գնով երազանքն իրականացնելու ձգտումը: Չնայած տարբեր վախճանին՝ Լևոնն ու Անտոնիոն նույն հաղթանակով են դուրս գալիս իրենց շրջապատող միջավայրից, և հաղթանակն ամենից առաջ դրսևորվում է նրանց անկեղծության, ազնվության մեջ:

Այնպես, ինչպես Ես-ը ներկայանում է <<երկու կերպարով>> , Անտոնիոյի կերպարի բնութագրությունը ևս երկու փուլով է կատարվում: Տարիները հաջորդում են միմյանց, և Վենեցիան մոռանում է այն թափառաշրջիկ պատանուն, որ սերենադներ էր նվագում փողոցներում:

Աշակերտներից մեկը կարդում է.

<<Անցան տարիներ:

Նորից Վենեցիան:

Քաղաքի ամբողջ մամուլն ավետեց հռչակավոր ջութակահար Անտոնիո Բոնվինիի գալուստը, որ իր միակ կոնցերտը պիտի տար մեծ թատրոնում: Վերջին ժամանակները ոչ միայն իտալական, այլև եվրոպական ու ամերիկյան ամբողջ մամուլը խոսում էր այդ նոր փայլուն աստղի մասին, որ երևացել է երաժշտական հորիզոնի վրա:

Անտոնիո Բոնվինի՛… Ամենքն անհամբեր սպասում էին նրա ելույթին:

Եվ ահա, վերջապես, դուրս եկավ նա բեմ: Ու ամբողջ դահլիճը գրեթե միաբերան հառաչեց: Մի՞թե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենեցիացի, այնն պատանի ջութակահարը…>> Այո՛, նույն Անտոնիոն, նույն հնչյունները… Սակայն այս Անտոնիոն նաև տարբեր է մյուսից:

Պատանի Անտոնիո	Անտոնիո Բոնվինի
Նվագողը մի պատանի էր իտալական դյութիչ	Ու որքան այդ հնչյունները էին, այնքան գեղեցիկ ու հմայիչ էր
Լայնեզր գլխարկով: Այնքան մեղմանուշ	ինքը՝ Անտոնիո Բոնվինին,
այնքան դյութիչ էր նվագած եղանակը,	կազմ հասակը, հրացայտ
որ Ջուլետտան կարծում էր, թե իր սըրտի լարերի վրա են նվագում:	վառված դեմքը,հանճարեղ ճակատը
Իր ամբողջ էությամբ լսողություն դարձած, ագահորեն կլանում էր մարմինը փ�ներդաշնակ շաքաղող այն դյութիչ ձայները ,որ պատանի երաժիշտը հիշեցնում էր ջութակի	աչքերը, ականջների մոտ ցրված զերը, բոլորը, մի սքանչելի նակություն էին կազմում նրա ջուտակի մոգական հնչյունների

լարերից,ինչպես աղբյուրի ակունքը դուրս
է հոսեցնում իր քչքչան ականակիտ ջուրը՝ անբռնազբոսիկ ու սահուն:

Այս երկու Անտոնիոների միջև ընդհանուրը երաժշտական հնչյունների նույն մոգական զորությունն է, և այն նվագողի նույն հպարտությունը:

-Ի՞նչ է սպասվում:

Բոլոր աշակերտները համոզված ասում են, որ Ջուլետտան ներում կխնդրի նրանից: Կարդում են համապատասխան հատվածը. <<Գեղեցիկ՝ ինչպես Ռաֆայելի Մադոննան, հագնված ինչպես մի թագուհի, շտապով մտավ մի նորատի կին և ուղղակի ընկավ երիտասարդ հանճարի ոտքերի առջև:

-Անտո՛նիո, ես քո Ջուլետտան եմ, ես սիրում եմ քեզ…>>

Աշակերտները հիշում են նովելի առաջին մասում իրավաբանականի երբեմնի ուսանողի և նախկին սիրած աղջկա հանդիպումը: Կարդացվում է հետևյալ հատվածը. <<Մի անգամ,- այդ մեր հարաբերությունների խզման հինգերորդ տարին էր, փողոցում բոլորովին պատահական կերպով երես առ երես հանդիպեցի նրան…

Ու երբ շփոթված ու կակազելով, ներեղություն հայցող ձայնով փորձեցի հիշեցնել նրան, թե ով եմ ես, նա սկզբում կարծես թե զարմացավ, շփոթվեց, հետո հանկարծ թողեց ինձ առանց մի խոսք անգամ արտասանելու, կառք նստեց և հեռացավ, ըստ երևույթին վախեցած, որ ես կարող եմ հետապնդել իրեն >>:

-Ո՞րն է այս հանդիպումների տարբերությունը, և ի՞նչ կերպ կվարվեր Ջուլետտան, եթե հանճարեղ ջութակահարի փոխարեն նրա առջև կանգներ աղքատ ու խեղճ Անտոնիոն,- որոնողական այս հարցն է ուղղվում դասարանին:

Աշակերտները գտնում են, որ հանդիպումների տարբերությունը հերոսներից մեկի ծայրահեղ աղքատ, մյուսի՝ հանճարեղ, ճանաչված լինելն է: Ջուլետտան նետվում է ոչ թե Անտոնիոյի ոտքերի առջև, այլ՝ նրա հանճարի, նրա մեծ ճանաչման: Հակառակ պարագայում սա էլ խույս կտար հանդիպումից, ինչպես Ես-ի սիրած կինը: Պատճառը մեկն է.ոչ իրավական հասարակության մեջ մարդու գնահատման չափանիշը մեկն է՝ հարստությունը, փողը:

Իսկ ո՞րն է երկու պատանիների տարբերությունը:

Աշակերտները պատասխանում են, որ Անտոնիոն, ի տարբերություն Ես-ի, վրեժխնդիր է լինում միայն բարձրանալով, որովհետև նա մերժվել էր ներքևում գտնվելու պատճառով: Նրանցից մեկը կարդում է հետևյալ հատվածը. <<Դուք վերևն էիք, ես ներքևը, և այդ ձեզ իրավունք էր տալիս արհամարհանքով նայելու դեպի ներքև: Բայց դուք հաշվի չէիք առել, որ ներքև գտնվողները երբեմն թևեր են առնում, թռչում վերև՝ վրիժառության զգացումով լեցուն: Այն օրը, որ դուք ձեր բարձունքից արհամարհանքով մերժեցիք ինձ՝ ներքև գտնվողիս, ես երդվեցի վրեժ առնել և դրա համար ուրիշ միջոց չգտա, բայց եթե միայն բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ինձ վրա նայող քմհաճույքն ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու: Այսօր ես հասա իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով խաղում է ուրիշի նվիրական զգացումների հետ, ով տարբերություն է դնում վերևի և ներքևի միջև, ավա՜ղ, սինյորա՜, ես չեմ կարող>>: Թե որն է նովելից բխող հիմնական գաղափարը, հիմնական եզրակացությունը, աշակերտները կարող են ասել դեպքերի
զարգացման ողջ ընթացքից ելնելով: Բայց այդ պատասխանը տվել է ամենից առաջ ինքը՝

Նար-Դոսը, նովելի վերջաբանում, իր հերոսի բերանով: Վերջաբանը կարդացվում է դասարանում: Եթե ողջ նովելն իր բովանդակությամբ իսկ դեռահասների բարոյական դաստիարակության գործում կարևոր դեր ունի, ապա վերջաբանում հեղինակն ուղղակի դիմում է բոլորին բարձրանալու՝ պայքարի մեջ տեսնելով իսկական ապրելու իմաստը: <<Բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ…>>:Դրանով իսկ դատապարտվում է կամազուրկ, թուլակամ մարդը: Այստեղ կա նաև մեկ այլ դաստիարակչական պահ՝ թե ինչպես գինին, խմիչքը կարող

են ամենախելացի, ամենակազմակերպված մարդուն գլորել դեպի ճահիճը: Այդպիսին էր իրավաբանականի վերջին կուրսի ուսանողը, որի կերպարը իսկական դատավճիռ է հարբեցողների, գինեմոլների համար:

Նովելի վերլուծության ընթացքում ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է այն կարևոր հարցին, որ Անտոնիոն մարտահրավեր է նետում ոչ թե Ջուլետտային, այլ այն հասարակությանը, որի տիպիկ ներկայացուցիչն է նա: Այդ առումով բախումը Անտոնիոյի և Ջուլետտայի անձնական նեղ հարաբերություններից վերաճում է հասարակականի: Այս հակասության մեջ էլ զարգանում են նովելի բոլոր գործողությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս

առանց համագործակցության >>

Ջեյմս

Ուայթսոն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է:Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացութ յունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Ուսուցման գործընթացի կատարելագործման համար անհրաժեշտ են կրթության կազմակերպման նորագույն ձևերի կառուցում,համագործակցային մեթոդների տեխնոլոգիաների կիրառումը, որը կհանգեցնի կրթության ոլորտի վերաիմաստավորմանը, հա- մագործակցային հարաբերությունների ձևավորմանը:

Աշխատանքի սկզբնական փուլում բնականաբար առաջանում են դժվարություններ,որոնք ազ- դում են տվյալ մեթոդի արդյունավետության, դասի որակի և աշակերտների կողմից նյութի յու-րացվածության մակարդակի վրա,սակայն դրանք ժամանակի ընթացքում հաղթահարելի դժվարություններ են:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է:Համագործակցային ուսուցմամբ վարած դասաժամերին աշակերտները միասին են մտածում տվյալ հարցի շուրջ,յուրաքանչյուր աշակերտ սովորող լինելու հետ մեկտեղ դառնում է նաև սովորեցնող:Համակցված ուսուցումը նպաստում է աշակերտների ակտիվ մասնակցությունը դասին,նրանց մեջ զարգացնում ընկերասիրությունը,հանդուրժողականությունը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1.Խաչատրյան Ս. Գ.,Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/ , <<Նախաշավիղ>>,1. 2003, Երևան, <<Տիգրան Մեծ>>, էջ 64:

2.Խաչատրյան Ս.Գ.,Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը,Գյումրի,2006,էջ 96

3. Հովհաննիսյան Գ.,Զոհրաբյան Ա.,Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանո-վա Ի.,Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները , Երևան, <<Տիգրան Մեծ>>, 2004, էջ 336 :

4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ.,Խրիմյան Մ., Խաչատրյան Ս.,Բյաթյան Ն.,Ալեքսան յան Լ.,Պուրուկուրու Վ.,Համագործակցային ուսուցում,Երևան,<<Անտարես>>,2006,էջ 123:

5.Գասպարյան Դ., Գրականություն 8,Երևան, <<Տիգրան Մեծ>>,2017,էջ 126: